«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ **ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ

ՀԵՂԻՆԱԿ ՆԵԼԼԻ ՍՈՒՐԵՆԻ ՏՈՆՅԱՆ

ՄԱՐԶ ԿՈՏԱՅՔ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՐԱԶԴԱՆԻ ԹԻՎ 5 ԴՊՐՈՑ

2022Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------3

Ներառական կրթության համակրգը և դրա ներդրումը հանրակրթական դպրոց, տեղական և միջազգային օրենսդրություն----------4

Ներառական կրթության օրենսդրական հիմքերը և դրա ներդրումը հանրակրթական դպրոց----------7

Եզրակացություն---------- 13

Գրականություն---------- 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթությունը կրթական համակարգի մի մասն է,որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթական առանձնահատուկ պայմաններ ունեցող անձանց համար:Այն հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի հանդեպ, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված մբոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին:Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները:Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն , ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիիքներ ունեցողները:Երեխաները, անկախ հաշմանդամ լինելուց կամ կրթական դժվարություններ ունենալուց դպրոցն ավարտելուց հետո որոշակի դերակատարություն ունեն հասարակության կյանքում և վաղ սկիզբը հանրակրթական խաղախմբերում կամ մսուրներում, որոնց հաջորդում են միջնակարգ դպրոցն ու քոլեջը, լավագույն նախապատրաստություններն են ինտեգրված կյանքի համար:Հաշմանդամ երեխաներն ունեն նույն խմբին պատկանելու նույնպիսի իրավունք , ինչպես մյուսները, իսկ առանձնացված ուսումը սահմանափակում է ինքնարտահայտման իրավունքներն ու հնարավորությունները: Միևնույն ժամանակ ներառական կրթությունը նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ , որոնք անցյալում անհնար էին:Ներառական կրթությունը մարդու իրավունք է , այն ապահովում է լավ կրթություն և սոցիալական առումով հիմնավորված է:Դպրոցում երեխաներին առանձնացնելու օրինական հիմքեր չկան:Երեխանը պետք է սովորեն միասին և նրանց պետք է կրթություն, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատել և պատրաստվել կյանքին հասարակության մեջ:Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության , հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:Ներառական կրթության ներդրումը և զարգացումը ՀՀ հանրակրթական դպրոցներում իրականացվող ներառական կրթության առանձնահատկություններն ու թերությունները արձանագրելու, ինչպես նաև ներկայիս հասարակությունում դրանց դերն ու նշանակությունը պարզելը բավականին հետաքրքիր և ուշագրավ երևություններ են և հենց այդ գործոններն էլ հիմք են հանդիսացել որպեսզի մեր ավարտական աշխատանքի համար ընտրվի հենց այս թեման:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ , ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

1.1 Ներառական կրթության բժշկական և սոցիալական մոդելը:

Մարդկության զարգացման ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ձևավորումն ու սահմանումն անցել են երկար ճանապարհ՝ խղճահարությունից մինչև սոցիալական բազմաթիվ ծառայությունների մատուցում:Այսօր աշխարհն արդեն ընդունում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման գաղափարը:Ներկայումս հաշմանդամության ընկալման երաբերյալ գոյություն ունեն և պրակտիկայում կամա թե ակամա կիրառվում են երկու մոդելներ՝ բժշկական ու բարեգործական և սոցիալական, որոնցից յուրաքանչյուրը պատկերացում է տալիս այն մասին, թե ինչն է որոշիչ <<հաշմանդամ>> բառի մեջ:

Հաշմանդամությունը համարվել է և համարվում է անձի խնդիրը, ինչը նշանակում է, որ հաշմանդամությունը <<հիվանդություն է>>, որի պատճառով անձի կենսագործունեությունը սահմանափակվում է, և, հետևաբար, ջանքերն ուղղվում են անձի վիճակի բարելավմանը, այսինքն՝ եթե կենտրոնանանք միայն առողջական խնդիրների վրա և հաշմանդամություն ունեցող մարդուն դիտարկենք որպես հիվանդի, ապա նրա վիճակի բարելավմանն ուղղված գործողությունները կբերեն հիմնական բժշկական և բարեգործական բնույթ (ֆիզիկական վերականգնում, բուժում, բարեգործական օգնություն): Այս մոդելի վրա հիմնված մոտեցման արդյունքում հաշմանդամություն ունեցող մարդը զրկվում է իր կյանքի համար ինքնուրույն

որոշումներ կայացնելու և իր սեփական ընտրությունը կատարելու հնարաորությունից, դառնում է << հիվանդ>>, << խնամյալ>>:Նրա փոխարեն որոշում են կայացնում ուրիշները (խնամողը, ընտանիքը, հասարակությունը): Հասարակությունը սահմանափակում է նրա կրթության, մասնագիտության, աշխատանքի և այլ հնարավորությունները , քանի որ նա հիվանդ է և ունի հիմնականում բուժման , խնամքի և հոգածության կարիք:Հաշմանդամություն ունեցող մարդու կյանքը կախված է մնում ուրիշների կարծիքներից և եզրակացություններից , որն էլ հանգեցնում է նրա սոցիալական մեկուսացմանը և խոչընդոտում է նրա լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքին:Այսպիսով բժշկական մոդելի տեսանկյունից հաշմանդամություն դիտարկվումէ որպես անձի խնդիր և պետության քաղաքականությունն ու ջանքերն ուղղվում են անձի բուժմանաը, վերականգնմանը, հատուկ խնամքին և աջակցությանը:Չբացառելով հաշմանդամության բժշկական մոդելի կարևորությունը՝ հաշմանդամության սոցիալակն մոդելը հաշմանդամությունը դիտարկում է որպես հասարակության սոցիալ մշակութային արժեքների հետևանք:Այս մոտեցումը բացարձակապես կառուցված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վր և կոչ է անում ստեղծել հավասար հնարավորություններ և լիարժեք մասնակցություն հասարակության բոլոր քաղաքացիների համար:Հաշմանդամության սոցիալակ մոդելը կենտրոնանում է արգելքների և խոչընդոտների վերացման վրա և վստահում է հաշմանդամություն ունեցող մարդու՝ որպես երկրի լիարժեք քաղաքացու կարողություններին և ներուժին:Ավելին, այս մոդելը կոչ է անում հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ մասնակցությանը երկրի զարգացման գործընթացներին:Հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է առաջնային և կարևոր մասնակցություն ունենան իրենց խնդիրների լուծմանն ուղղված օրենքների, քաղաքականությունների ռազմավարությունների և գործընթացների մշակմանը, իրականացմանը, մոնիթորինգին և գնահատմանը:Սոցիալական մոտեցման դեպքում հաշմանդամություն ունեցող մարդկան կյանքի որակը բարելավելու գործողություններն ուղղված են այն բանին , որպեսզի վերացվեն բոլոր ներքին ու արտաքին խոչընդոտները, որոնք խանգարում են հասարակության կյանքին , նրանց ներգրավմանը:Սոցիալական մոտեցման կիրառումը կհանգեցնի հաշմանդամություն ունեցող մարդկանց հնարավորությունների հավասարեցմանը մյուս բոլոր մարդկանց հետ և նրան համար ճանապարհ կբացի դեպի լիարժեք կյանք:Այսպիսով, սոցիալական մոդելի տեսանկյունից համմանդամությունը սահմանվում է որպես անձի առողջական խնդիրների հետևանքով ձեռք բերած ֆունկցիոնալ սահմանափակումների և միջավայրային վերաբերմունքի , արգելքների, խոչընդոտների փոխազդեցության հետևանք:Հետևաբար, հաշմանդամության խնդիրների լուծմանն ուղղված քաղաքականությունը պետք է հիմնականում կենտրոնանա միջավայրային խոչընդոտների վերացմանը և հավասար հնարավորությունների ստեղծմանը:Սոցիալական մոդելի վրա հիմնված մոտեցումը կազմում է ներառական կրթության առանցքը, քանի որ այն ենթադրում է ՝ բոլոր երեխաների կրթության կարիքների հավասար գնահատում. Դպրոցի ուսումնական և մշակութային, համայնքային

միջոցառումներին բոլոր երեխաների ներգրավվածության աստիճանի բարձրացում, կրթական քաղաքականության վերանայում և համապատասխանեցում բոլոր երեխաների կարիքներին, ուսումնական գործընթացներում առկա խորչնդոտների վերացում և նրանում բոլոր աշակերտների ներգարվվում, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների միջև առկա տարբերությունները ոչ թե որպես դժվար հաղթահարվող բարդության, այլ որպես կրթական գործընթացային նպաստող հանգամանքի ընդունում, սեփական համայնքում կրթություն ստանալու բոլոր երեխաների իրավունքի հավասար պաշտպանություն և հարգանք, դպրոցական պայմանների բարելավում, հասարակության ժողովրդավարական և մարդասիրական արժեհամակարգի ձևավորման գործում դպրոցների դերի կարևորում ,կրթությունը որպես հասարակության մեջ բոլոր մարդկանց լիարժեք ներառման և ինքնադրսևորման կարևորագույն բաղադրամասի ճանաչում:

1.2 ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ

United Nations Educational Scientific and Cultural Organization

Կրթական ծառայությունների հասանելիության խնդիրը հանդիսանում է միջազգային հանրության քննարկումների թիրախը 1990-ականներից ի վեր, երբ ընդունվեցին երեխաների պաշտպանության ոլորտում երկու կարևորագույն փաստաթղթեր՝ << Երեխաների իրավունքների կոնվենցիան>> և <<Կրթությունը բոլորի համար>> համաշխարհային հռչակագիրը:Ներառական կրթության գաղափարական և հիմնադրույթային սկզբունքների մշակումը տեղի է ունեցել չորս տարի անց՝ 1994թ-ին Սալամանկայում ստորագրված համանուն հռչակագրի շրջանակներում, որը վերահաստատվել է 2000թ-ին Սենեգալում՝ կրթության համաշխարհային ֆորումի ընթացքում:Ներառական կրթության հայեցակարգային հիմքերի և միջազզգային օրենսդրական ակտերի հետագա զարգացման մեջ նշանակալի ներդրում ունեցավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 1996թ-ին ընդունված կրթության մեջ խտրականությունների դեմ կոնվենցիան:

Հետագայում՝ 2005թվականին ՅՈՒՆԵՍԿՕՆ շրջանառության մեջ դրեց երկու կարևորագույն հասկացությունների սահմանումները <<ներառում>> և << ներառական կրթություն>> :Ըստ այդ կոնվենցիայի ՝ <<ներառումը>> սհամանվեց իբրև բոլոր սովորողների կարիքների հասցեագրմանն ուղղված գործընթաց, որը տեղի է ունենում ուսման, մշակույթի և համայնքներում մասնակցությունը բարձրացնելու և կրթության մեջ և կրթությունից մեկուսացումը նվազեցնելու միջոցով:

Հաջորդ կարևոր քննարկումը տեղի ունեցավ 2008 թվականին Ժնևում կայացած Կրթության միջազգային կոնֆերանսի 8րդ համաժողովի շրջանակներում, որտեղ քննարկվեցին մի շարք

առանցքային դրույթներ, որոնք կարևոր են ներառական կրթության հայեցակարգային հիմքերի զարգացման քաղաքականությունների մշակման և ներդրման համար:Խոսքը գնում է , մասնավորապես << ներառական կրթություն>> , << կրթություն բորորի համար>> և << կրթության մեջ ինտեգրում>> հասկացությունների մասին , որոնք հաճախ նույնացվում են , սակայն բովանդակում են սկզբունքորեն տարբեր նպատակներ և խնդիրներ:

Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ճանաչումը ամրագրված է Հայաստանի սահմանադրության 35-րդ հոդվածով, համաձայն որի՝ << Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք>>: Հայաստանում հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է բոլորի համար:Համաձայն կրթության մասին ՀՀ օրենքի, որն ընդունվել է 1999 թվականին << Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով>>:Միաժամանակ նշված օրենքում ամրագրված է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում՝ հատուկ ծրագրեով:

ՀՈՒՅՍԻ ԿԱՄՈՒՐՋ

«Առաքելություն Արևելք»-ի ներկայացուցիչների այցը

Նշված օրենքը հնարավորություն տվեց հասարակական կազմակերպություններին հանրակրթական դպրոցներում իրականացնելու ներառական կրթության ծրագրեր:2001 թվականից<< Հույսի կամուրջ>> հասարակական կազմակերպության Դանիական<< Առաքելություն Արևելք>> միջազգային կազմակերպության և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աջակցությամբ ՀՀ հանրակրթական դոորոցներն իրականացնում են ներառական կրթույթուն:ՀՀ կրթության և գիտության նախարարության << Հույսի կամուրջ>> հասարակական կազմակերպության միջև ստորագրված փախըմբռնման հուշագրի հիման վրա 2000թ. Երևանի Դերենիկ Դեմիրճյան 27 միջնակարգ դպրոցում մեկնարկեց ներառական կրթության փորձնական ծրագիրը , իսկ 2001-2005 թթ. ընթացքում ներառական կրթություն իրականացվել է փորձնական կարգով հինգ հանրակրթական դպրոցներում: 2005թ. ընդունվեց << Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>> ՀՀ օրենքը:Խորհրդային հասարակարգում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը հիմնականում կազմակերպվում է գիշերօթիկ դպրոցներում:Հայաստանի կողմից ՄԱԿ-ի << Երեխայի իրավունքների մասին>> կոնվենցիային միանալուց հետո սկսվել է երեխաների իրավունքների պաշտպանության համակարգված գործընթացը հանրապետությունում:Կրթական համակարգին զուգընթաց հանրապետությունում ընթացել են նաև հատուկ կրթության գիշերօթիկ դպրոցների համակարգի բարեփոխումներ:Արժևորելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման, դաստիարակության, բնականոն զարգացման և սոցիալական ինտեգրման խնդիրները ՝ հատուկ ուսուոմնական հաստատությունների բարեփոխումները հիմնված են երկու հիմնարար սկզբունքների վրա՝ կրթության մատչելիություն և որակ:Հետևաբար, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ՝ իրենց անհատական կրթական կարիքներին համապատասխան ներառական որակյալ

կրթությամբ ապահովելը դարձել է օրակարգային հարց:Այս ուղղությունների իրականացման նպատակով ընդունվել են մի շարք իրավական ակտեր, փոփոխություններ են առաջադրվել <<Կրթության մասին>>, <<Երեխայի իրավունքների մասին>> և <<Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալակ պաշտպանության մասին>> ՀՀ օրենքներում , 2005թ. << Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>> օրենքի ընդունումով սահմանվեց << Ներառական կրթություն>> հասկացությունը:Համաձայն նշված օրենքի <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուսումն է հանրակրթական հաստատություններում նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ>>: 2007 թվականից սկսած ճանաչվեց ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների ցանցը:

1.3. Ներառական կրթություն իրականացնող և դրան աջակցող հասարակական կազմակերպություններ:2005թ. սեպտեմբերի 1-ին ուժի մեջ մտավ <<Կրթության առանձնահատուկ պայամանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>> ՀՀ օրենքը:Դրանով պետականորեն ճանաչվեց և ամրագրվեց նաև ներառական կրթությունը Հայաստանում:Սակայն մինչև այդ <<Հույսի կամուրջ>> հասարակական կազմակերպությունից հինգ տարի պահանջվեց Երևանի հինգ դպրոցներում այն իրականացնելու և որպես հաջողված փորձ ՀՀ կառավարությանը ներկայացնելու համար:

Այսօր Հայաստանը միակ երկիրն է տարածաշրջանում, որն արդեն ունի ներառական կրթության փորձը և այն դարձել է պետական քաղաքականության կարևոր մասը:ԱՊՀ երկրներում բազմիցս ներկայացվել են մեր երկրի ձեռքբերումներն այս ոլորտում, որտեղ Հայաստանը շարունակում է մնալ առաջատարը:Հայաստանում ներառական կրթության զարգացման և կայացման համար ՀՀ ԿԳՆ-ին և ներառական դպրոցներին մշտական աջակցություն են ցուցաբերում <<Հույսի կամուրջ>> և <<Առաքելություն Արևելեք>> կազմակերպությունները՝ Դանիայի և Նորվեգիայի արտաքին գործերի նախարարությունների ֆինանսավորմամբ:<<Հույսի կամուրջ>> հասարակական կազմակերպությունը առաջնորդվում է հաշմանդամության սոցիալական մոդելի սկզբունքներով, կենտրոնացած է հաշմանդամության

խոչընդոտները վերացնելով և հավատում է հաշմանդամություն ունեցող երեխաների ու նրանց ծնողների լիրաժեք կարողություններին և նրանց պոտենցիալին:Կազմակերպությունը ստեղծվել է 996 թվականին՝ օգնելու հաշմանդամություն ունեցող երեխաներին ու երիտասարդներին և նարանց ծնողներին՝ հաղթահարելու իրենց մեկուսացվածությունը և բոլորի հետ հավասար մասնակցելու հասարակական կյանքին:<<Հույսի կամուրջը>> հավատում է, որ խտրականությունը հաշմանդամություն ունեցող մարդկանց նկատմամբ հնարավոր է վերացնել, եթե պետության և հասարակության կողմից դրսևորվի համապատասխան կամք և հավասարության սկզբունքներ:Մարդն է ստեղծում խտրականությունը և նա էլ կարող է վերացնել այն:Աշխարհում ոչ ոք ապահովագրված չէ ոչ հաշմանդամությունից, ոչ էլ հաշմանդամություն ունեցող երեխայի ծնող դառնալուց, ուստի լուծելով հաշմանդամության հետ կապված հիմնախնդիրները՝ յուրաքանչյուր ոչ անուղղակիորեն օգնում է ինքն իրեն:<< Հույսի կամուրջը>> գիտակցում է, որ իր իրավունքներից օգտվելու հնարավորությունից զրկված լինելու պատճառով հաշմանդամություն ունեցող մարդիկ հասարակության ամենաղքատ և ամենախոցելի խումբն են և կմնան այդպիսին, քանի դեռ պաշտպանված չեն նրանց լիարժեք կրթության , առողջության պահպանման լիարժեք մասնակցության, աշխատանքի և արժանապատիվ կյանքի իրավունքները և հավասար հնարավորությունները:

<<Հույսի կամուրջի>> նպատակն է. Աջակցել կրթության մատչելիության և հավասար հնարավորությունների ապահովմանը՝ հաշմանդամություն ունեցող և կրթության այլ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների և երիտասարդների համար: Հաշմանդամություն ունեցող երեխաներին աջակցել զարգացնելու իրենց մտավոր ֆիզիկական և հոգևոր կարողությունները, ինչպես նաև համայնքում լիարժեք անկախ և լիարժեք ապրելու սոցիալական հմտությունները:

Գործունեության հիմնական ուղղություններն են՝

- Կրթության մատչելիության ապահովում

- Սոցիալ-հոգեբանական և կրթական համայնքային ծառայություններ
- Շահառուների շահերի պաշտպանություն և ազդեցություն՝ հաշմանդամության ուղղությամբ տարվող քաղաքականության և գործընթացների վրա

<<Հույսի կամուրջը>> ՀՀ կրթության և գիտության հետ համատեղ 2001թվականից սկսեց ներառական կրթության զարգացման գործընթացը ՀՀ-ում:<<Հույսի կամուրջի>> ներառական կրթության փորձը դարձավ այն հենքը, որի վրա երկրում մշակվեց համընդհանուր ներառական կրթության օրենսդրությունն ու քաղաքականությունը:Կազմակերպությունը շարունակում է իր հիմնական գործընկերների և ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ միասին դեպի համընդհանուր ներառական կրթական համակարգի ձևավորումը մեր երկրում: <<Հույսի կամուրջը>> Հայաստանում ներառական գաղափարների և ներառական կրթության տարածման առաջամարտիկը դարձավ :Այսօր արդեն ներառական կրթությունը պետական քաղաքականությունն է մեր երկրում: <<Հույսի կամուրջը>> շարունակում է իր ճանապարհը դեպի համընդհանուր ներառական կրթություն և դեպի ներառական հասարակություն Հայաստանի Հանրապետությունում ՝ իրեն առաջնորդող հարյուրավոր հաշմանդամություն ունեցող երիտասարդների, երեխաների, նրանց ծնողների և իր բազմաթիվ գործընկերների հետ միասին:Այսօր <<Հույսի կամուրջին>> ճանաչում են ոչ միայ Հայաստանում, այլ նրա սահմաններից դուրս:201թ. հաշմանդամություն ունեցող անձանց որակյալ կրթությանը նպաստելու համար <<Հույսի կամուրջը>> արժանացավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային մրցանակին, իսկ 2016 թվականին <<Հույսի կամուրջի>> դեպի կրթություն բոլորի համար. <<ներառական կրթություն>> ռազմավարական ծրագիրը արժանացավ Zero Projekt միջազգային մրցանակին, որպես ընդօրինակելի մոդել աշխարհի շատ երկրների համար:<<Առաքելություն Արևելեք>> Դանիական օգնության և զարգացման կազմակերպությունը հիմնվել է 1991 թ.՝ Ռենե և Քիմ Հարցներների կողմից օգնելու Արևելյան Եվրոպայի սոցիալական և տնտեսական դժվարին իրավիճակներում հայտնված երկրներին:Տարիների ընթացքում կազմակերպությունն առավել ընդլայնեց իր գործունեության աշխարհագրությունը Արևելյան Եվրոպայից մինչև Միջին և Արևելյան Ասիայի երկրներ:Կազմակերպությունը հանդիսանում է գլոբալ հիմնադրամի <<Աջակցություն ՀՀ-ում ՄԻԱՎ /Ձիահին/ հակազդման ազգային ծրագրին>> հիմնական ռեցիպիենտը:

«Հույսի կամուրջ»
հասարակական կազմակերպություն



Ամեն ինչ լավ է լինելու

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ հասարակական կազմակերպություններն ահռելի դեր են կատարում ներառական կրթության ներդրման և դրա պատշաճ կերպով իրականացման գործընթացում:Դպրոցի և հասարակական կազմակերպության մշտական կապն ու համագործակցությունը երկու կողմերին էլ հնարավորություն է տալիս կատարել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բացահայտում, նրանց անհրաժեշտ բովանդակության իրականացում և հնարավորության դեպքում խնդրի բարեհաջող կարգավորում:

Հասարակական կազմակերպությունների կողմից երեխաներին շնորհված հնարավորությունների միջոցով բազմաթիվ հատուկ կարիքավոր, սակայն օժտված երեխաներ կարողանում են վստահորեն և առանց բարդույթաորվելու հանրությանը ներկայացնել իրենց կատարած աշխատանքներն ու գնահատանքի արժանանալ,իսկ վերջինս շատ կարևոր և երբեմն նույնիսկ ճակատագրական կարող է լինել կրթության առանձնահուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:Իսկզբանե ճնշված և հասարակության կողմից տարբերվող վերաբերմունքի արժանանալով՝ նրանց համար շատ կարևոր է իրենց մեջ սեփական ուժերի նկատմամբ ինքնավստահության սերմանումն ու իրենց կողմից կատարված ցանկացած բնույթի աշխատանքի հնարավորինս պատշաճ գնահատումը, իսկ հասարակական կազմակերպությունները իրենց առաջնային առաքելությունն են համարում վերը նշված խնդիրների լուծումն ու փորձում են անել ամեն ինչ հաջողության հասնելու մեր երկրում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մեջ առողջ հոգեբանություն ձևավորելու և նրանց հասարակության լիարժեք անդամը լինելու գիտակցությունը բարձրացնելու ուղղությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ղազումյան Բ. (2016), Ներառական կրթության կազմակերպման իրավական և կրթական խնդիրները,Ընտանիք և դպրոց(Գիտամեթոդական ամսագիր), Երևան:<<Լույս>>
2. Ղազարյան Լ. (2003), Ներառական կրթության առավելություններն ու դժվարությունները, Երևան:<<Լույս>>
3. Մարգարյան Մ. (2003), Կրթություն բոլորի համար. Ներառական կրթություն, Երևան:<<Լույս>>
4. Ոշտունի Ն. 2003), Ներառական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում. Օրենսդրական վերլուծություն, Երևան:<<Լույս>>
5. Առաքելյան Ռ. Կրթության օրենսդրական հիմքերը: http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/Inclusive-educat-report ARM-without-tools,pdf 07.12.16
6. Դավթյան Հ.<<Հույսի կամուրջ>> հասարակական կազմակերպություն http://bridgeofhopl.am 15.0.17
7. <<Առաքելություն Արևելք>> հասարակական կազմակերպություն https://www.miseast.org/en/armenia/ home 20.0.17
8. << Առաքելություն Արևելք>> դանիական մարդասիրական օգնության կազմակերպություն http://www.nt.am/am/news/171589/15.05.17